ԼՐԱՏՈՒ

ԴՎԻՆԻ 1980 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1980 թ. Դվինում հիմնական հնագիտական աշխատանքները շարունակվել են նախորդ տարիների պեղավայրերում՝ միջնաբերդի ստորին հատվածում, հարավային բուրգի շրջանում և կենտրոնական թաղամասում բացված V—VI դդ. պալատական դահլիճի արևմտյան թևում։

Քաղաքի միջնաբերդի ստորին հատվածի պեղումները շատ հետաքրքիր նյութեր են ընձեռում սոցիալական և տնտեսական տարբեր խնդիրների ուսումնասիրման առումով։ Այս թաղամասն անմիջապես գտնվում է միջնաբերդը քաղաքի հետ կապող գլխավոր մուտքերից մեկի ձախ մասում և կից է պարսպին։ Այդ հանգամանքը կարևոր դեր է խաղացել որոշելու թաղամասի դեմքը. այն առևտրաարհեստավորական է։ Դեռ նախորդ տարիների պեղումների ժամանակ[1] այստեղ բացվել է փողոցի մի հատված և տների մի ամբողջ շարք՝ արտադրական կառույցներով, խեցեղենի խոտանով, թրծման և հարդարման պարագաներով. գտնվել է դրամների երկու գանձ։ 1979—1980 թթ. նույն շարքի վրա սկսել է բացվել բնակելի և արտադրական սենյակներով չորրորդ մեծ համալիրը (աղ. I, 1)։ Իր կոնստրուկտիվ առանձնահատկություններով այս շինությունը նման է նույն շարքի վրա կառուցված մյուս շենքերին։ Շինանյութը նույնն է՝ հում աղյուս և կավե հիմքի վրա թերթաքարեր. ծածկերը եղել են հարթ, երդիկով։ Այս համալիրի սենյակներն ավելի ընդարձակ են։ Շերտը բավականին խորն է և նկատելի է հատակների երեք մակարդակ։ Փոքր սենյակներից մեկում բացվել է մի մեծ թոնիր, որն օգտագործվել է որպես թրծման հնոց (աղ. II, 1)։ Այստեղ գտնվել է ջնարակած խեցեղենի արտադրական խոտան։ Նման մեծ թոնիրների հետքեր նկատվել են նաև մյուս շինություններում։ Կարելի է ասել, որ յուրաքանչյուր համալիրում եղել է արհեստագործական բաժին՝ իր վառարանով, դաղվահով և այլ պարագաներով։ Թաղամասի բոլոր համալիրները բնորոշվում են նման առանձնահատկություններով։ Գտնված նյութերը հարուստ չեն, բայց շատ հետաքրքրական են XII—XIII դդ. նյութական մշակույթի համար։ Շատ է խոհանոցային հասարակ խեցեղենը՝ բեկորներով, ներճկված կանթերով (աղ. II, 6, 7)։ Ջնարակած խեցեղենը կրկնում է նախորդ տարիների պեղումներից հայտնի տիպերը՝ առատ են միագույն կանաչ և երկնագույն ջնարակով անոթները։ Բազմագույն խեցեղենն աչքի է ընկնում փորագիր հստակ զարդերով (աղ. III, 3)։ Խեցեղենի վրա նկատելի է մասսայական արտադրության կնիքը։ Գտնված նյութերը մեզ բերում են այն համոզման, որ այս թաղամասում բնակվել են միջակ կարողության տեր առևտրաարհեստավորական խավերի ներկայացուցիչները։ Պարզ նկատվում է այն տարբերությունը, որ կա միջնաբերդի զագաթի շինություններից և այս թաղամասից գտնված նյութերի մեջ։ Բացակայում են շքեղ ջնարակած անոթները։

Հարավային բուրգի պեղավայրում հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր գիպսե սվաղով պատի բացման աշխատանքների վրա։ Հետաքրքիրն այն է, որ մոտ 22—23 մ երկարությամբ այդ հաստահեղույս պատը, պարսպին և աշտարակին լինելով զրեթե զուգահեռ, անկյուն տալով շարունակվում է դեպի հյուսիս։ Այստեղ բացվել է պատի մոտ 10 մ երկարությամբ շատ վատ պահպանված հատվածը։ Ըստ երևույթին, հետագա կառուցումների ժամանակ լքված շենքի վերին մասերը լրիվ քանդել են, իսկ այն հատվածը, որը մնացել է պարսպի և աշտարակի տակ՝ պահպանվել է մի քանի մետր բարձրությամբ։ Պատի արևմտյան մասը և անկյունը նույնպես ունեն լուրջ խաթարումներ, հողի հաստ շերտը թույլ չի տալիս ճշտելու այդ կարևոր հանգույցի կառուցվածքը։ Որոշվել է պատի հաստությունը՝ 2,5 մ, որոշ տեղերում բացվել են ներքին երեսները։ Առայժմ դժվար է պարզել IX—X դդ. թվագրվող այդ շինության ֆունկցիոնալ նշանակությունը։

---

[1] Ա. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի 1971—1973 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 7), Կարո Ղաֆադարյան, Արամ Քալանթարյան, Դվինի 1975—1976 թթ. պեղումները (նույն տեղում, 1978, № 2), Արամ Քալանթարյան, Դվինի պեղումները 1978—1979 թթ. (նույն տեղում, 1982, № 2), Նույնի՝ Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները, 1977 թ. («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2)։

Պեղավայրում շերտագրական պատկերը շատ հստակ է։ Եթե վերին շերտերում մանր քարերով կավաշեն հյուղակներ էին, ապա ստորին մասերում բնակելի տներն ավելի կանոնավոր տեսք մեկի հատակին։ Այդ խեցեղենը հիմնականում անգոբաղարդ է, տարբեր երանգներով և զարդամոտիվներով։ Այդ շերտում բացակայում է փորագրման տեխնիկայով հարդարված ջնարա-



Աղյուսակ I

են ստանում, պատերը շարված են տուֆի մեծ քարերով՝ կավե հիմքի մեջ։

X—XI դդ. շերտը թվագրվում է ջնարակած խեցեղենով, որը դտնվում էր շինություններից կած խեցեղենը, որը սկսում է երևան գալ միայն XI դ., իսկ հետագայում լայն տարածում է ստանում։ Դվինի կենտրոնական թաղամասում, որի հիմնական կառույցներն ավերվել են 893 թ.

երկրաշարժի ժամանակ, նման խեցեղենը բացակայում է, իսկ ողջ տարածքի վերին՝ XII—XIII դդ. շերտերում, դուրս է գալիս այլ տիպի խեցեղեն, հարդարման նորառոճ հնարներով։ Այսպիսով չնարակած խեցեղենը մնում է այն չափանիշը, որը ճշգրիտ ընութագրում է հուշարձանի ժամանակագրական պատկերը։

ների բեկորներ, չնարակած խեցեղեն (աղ. III, 4), ապակե բարձրարվեստ անոթներ, հասարակ խեցեղեն և այլն։ Հախճապակին միջնադարյան է և հավանորեն բերվել է Սամառայից[2]։ Հախճապակին բաղկացած է Դվինում հանդիպող փոված պակներով և օղակավոր լայն նստուկներով հանրածանոթ անոթներից[3]։

Աղյուսակ II

Հարավային բուրգի հատվածում գտնվել են նաև հասարակ, խոհանոցային խեցեղեն (աղ. IV, 2, 6, 7), շատ քիչ հախճապակի, զարդեր, երկաթե գործիքներ և զենքեր։

Կենտրոնական թաղամասում պեղումները հիմնականում կենտրոնացված էին V—VI դդ. պալատի արևմտյան թևում, անմիջապես սյունազարդ դահլիճին կից։ Այս հատվածների վաղ միջնադարյան շերտն ավերվել է IX դ. թաղամասի կառուցապատման ժամանակ։ Սակայն IX դ. շենքերը խիստ տուժել են 893 թ. երկրաշարժի հետևանքով, և ստացվել է բավականին խառնաշփոթ պատկեր։ 1979 թ. այստեղ բացվեց մի նկուղ, որը հագեցված էր առաջնակարգ նյութերով։ 1980 թ. բացվեցին այդ շրջանի շինությունների կավակերտ պատերի առանձին հատվածներ, որոնք ամբողջական հատակագծային պատկերներ չեն ստեղծում։ Շինությունների հատակների վրա և հորերում գտնվել են կոբալտով նկարազարդված հախճապակե անոթներ։

Դրսից և ներսից անոթները պատած են կաթնագույն չնարակով, որի վրա կան կապույտ կոբալտով արված բուսական տարբեր զարդեր (աղ. III, 1, 2)։ Սակայն կան անոթների նոր տիպեր, որոնք Դվինում և ընդհանրապես Մերձավոր արևելքում հանդիպում են առաջին անգամ և այդ առումով լուրջ հետաքրքրություն են

[2] F. Sarre, Die Keramik von Samarra, Berlin, 1925, p. 44—49, Taf. XVIII.

[3] Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, նկ. 206, Ա. Ա. Քալանթարյան, Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964—1970 թթ., Երևան, 1976, էջ 81—83, աղ. XXXII, 4—6, Ա. Ս. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին («Հայաստանի հնագիտական հուշարձանները», պրակ 10, Երևան, 1981, էջ 89—91)։

ներկայացնում։ Բավականին սովոր խումբ են կազմում հասարակ անոթները։ Դրանք հիմնականում կրկնում են նախորդ տարիների պեղումներից գտնված հանրահայտ ձևերը, սակայն առանձին անոթներ իրենց արտաքին հարդարանքով, պրոֆիլացված մասերով և կանթերով

Աղյուսակ III

առաջին անգամ են հանդիպում Դվինի IX դ. նյութերի մեջ։ Խոսքը վերաբերում է կճուճների նորահայտ ձևերին, որոնք որոշակիորեն տարբերվում են իրենց պսակներով, իրանի ավելի ալացիկությամբ (աղ. IV, 1, 3, 4, 8)։ Սակայն այստեղ ևս նկատելի է այն կանոնիկությունը, որը պարտադիր է IX դ. նման անոթներին. դա չափերի համամասնությունն է (ինչպես օրինակ բարձրության և բերանի տրամագծի համապատասխանությունը)։ Կճուճներից մեկի վրա կա արաբերեն արձանագրություն, որը, հավանաբար, մաղթանք է (աղ. IV, 1)։

Շատ հետաքրքիր խումբ են կազմում լայն տրամագծով խոր քրեղանները։ Դրանք աչքի են ընկնում պսակների բազմազանությամբ և հատակների կորությամբ։ Շինություններից մեկի հորերում 1980 թ. գտնվել է նման 10 քրեղան, որից 7-ը՝ ամբողջական։ Քրեղաններն աչքի են ընկնում լավ մշակմամբ և հավանաբար օգտագործվել են տնտեսական նպատակներով։ Անոթներից մեկի հատակին թրծելուց հետո արված է խաչաձև զարդ։

Հայաստանի միջնադարյան խեցեղենի ուսումնասիրության առումով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում զարդարուն կաղապարի մեջ պատրաստված IX դ. անոթների գյուտերը Դվի-

---

4. A. U. Pope, Ceramic Arin Islamic times „A Survey of Persian Art", London, 1939—1940, vol. II, p. 1471—1472).

5 Բ. Ն. Առաքելյան, Հայաստանի քաղաքները և արհեստները IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 229։

սասիական հուշարձաններում։ Դվինում դրանք մեծ մասամբ գտնվել են XI—XII դդ. շերտերում։ IX դ. թվագրվող թասի առաջին օրինակը Դվինում հայտնաբերվել է 1970 թ.[6]։ Նույն կապարով զարդարված սափորի բեկորը գտնվել զարդարված անոթների արտադրություն։ Բացառված չէ, որ այս երեք անոթներն էլ պատրաստվել են նույն արհեստանոցում, միևնույն վարպետի կողմից։

Հասարակ խեցեղենի ժողովածուն աչքի է ընկ-



Աղյուսակ IV

է հետագա տարիներին։ 1980 թ. գտնվել է նույն զարդով երկրորդ թասը (աղ. II, 3)։ Այս գյուտերը թույլ են տալիս եզրակացնելու, որ Դվինում IX դ. եղել է կաղապարի օգնությամբ

նում նաև այլ առարկաներով՝ խփեր, ճրագներ և այլն։ Փոքր խփերից մեկի վրա պահպանվել է արաբերեն արձանագրության հատված (աղ. II, 5)։ Բավականին հետաքրքիր են հենակներով գավաթները (աղ. II, 4), որոնց մի մասը, հավանաբար, ճրագներ են, սակայն կան չափով մեծ օրինակներ, որոնք այլ նպատակներով

6 Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., էջ 71։ Թասի թվագրությունը ճշտվել է հետագա գյուտերի շնորհիվ։

են օգտագործվել։ Նման գավաթները հանդիպում են վաղ միջնադարում (ոչ մասսայական) և շարունակում են գոյատևել IX—X դդ.։ Գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված նույնատիպ մի անոթ հայտնի է դեռևս նախորդ պեղումներից[7]։

Դվինը ապակեգործության խոշոր կենտրոն էր և, ըստ երևույթին, ապակին արտահանվող ապրանքների մեջ կարևոր տեղ ուներ։ Դվինի ապակու մասին շատ է գրվել, սակայն յուրաքանչյուր տարվա պեղումները տալիս են նոր ձևեր (աղ. III, 6, IV, 5), արտադրանքի նոր տեսակ։ Կենտրոնական թաղամասում գտնված ապակու կերակրող մեծամասնությունը ղամպարներ են՝ տարբեր ձևերով, դույնով և զարդերով։ Ղամպարների այդպիսի առատությունը բացատրվում է այդ հատվածում եկեղեցիների և պալատական շինությունների առկայությամբ։ Ըստ երևույթին դրանք ունեցել են շատ շքեղ չափեր, որոնց գոյությունը միջնադարյան Հայաստանում փաստարկված է նաև պատմագրության մեջ[8], 1980 թ. գտնված ղամպարների մեջ աչքի են ընկնում մեծ տրամագծով և կանթերով օրինակները, որոնց մի մասն ունի մատնեքներ։ Մեծ հմտությամբ են պատրաստված թասերը։ Դրանցից մեկը կապտականաչավուն թափանցիկ ապակուց է և ունի ուղղահայաց իջնող ուռուցիկ մասեր, որոնք առանձին շքեղություն են պատճառում անոթին։ Բոլորովին նոր ձև է հաստ ապակուց, կլոր բարձր նստուկով հենակով գավաթը։ Անոթի վրա արված են կենաց ծառ հիշեցնող իրար հաջորդող զարդեր (աղ. III, 5)։ Բոլոր անոթները պատրաստված են ազատ փչման եղանակով։

Գտնված առարկաներից գեղարվեստական մեծ արժեք ունեն նկարազարդ անոթները, որոնք շատ սակավ են հանդիպում Դվինում[9] և, ամենայն հավանականությամբ, բերված են մերձավոր արևելյան կենտրոններից՝ հավանաբար Սամառայից։ Նկարազարդ ապակիները ներկայացված են երեք բաժակներով։ Մեկի զարդը ութ անգամ անընդմեջ կրկնվող քառաթև վարդյակների բավականին բարդ պատկեր է, մյուսը, որը պահպանվել է շատ վատ և զարդը վերականգնելն անհնար է, նույնպես բուսական է՝ շատ պարզ, առանց ավելորդ գծերի։ Երրորդ անոթի զարդն իր կատարման սկզբունքով մի քիչ տարբերվում է առաջին երկուսից։ Այստեղ նկատելի է շատ բարդ բուսական զարդի վերարտադրություն, որի ֆոնի վրա արված է ինչ-որ կենդանու սիմվոլիկ նկար։ Երեք բաժակների պսակների վրա շուրջանակի կա արաբերեն արձանագրություն (մեկը՝ ամբողջական, մյուսը՝ կիսով չափ, իսկ երրորդը՝ մեկ հատվածով պահպանված)։ Արձանագրություններն ամբողջովին չեն վերծանված, սակայն նախնական ընթերցումները ցույց են տվել, որ դրանք մաղթանքներ են, հավանաբար, վերցրած Ղուրանից։ Դվինում գտնված նկարազարդ ապակիների քննությունը ցույց է տալիս, որ դրանք պատրաստված են միևնույն արհեստանոցում (բոլոր անոթների վրա նկատելի է միևնույն ձեռագիրը)։ Նկարազարդման այս տեխնիկան բավականին բարդ էր և չնայած Դվինի ապակեգործները անոթների պատրաստման գործում հասել էին բարձր մակարդակի, այնուամենայնիվ, նրանք դեռևս չէին կարողանում նկարազարդման այս եղանակը կիրառել իրենց արտադրանքում։

Պալատական դահլիճի արևմտյան թևի ստորին շերտերի պեղումները շատ հետաքրքիր նյութեր են տալիս վաղ միջնադարյան Դվինի մշակույթի վերաբերյալ։ Սյունազարդ դահլիճին կից շինությունն օրգանապես մտնում է պալատի հատակագծային սխեմայի մեջ։ Սակայն այստեղ հստակ նկատվում է շինարարական մի երկրորդ շրջան, որի ժամանակագրական սահմանները մոտավորապես ընդգրկում են VI դ. 50—70-ական թվականները։ 572 թ. ապստամբության ժամանակ[10] պալատի հրդեհման հետ միասին դադարել է գոյություն ունենալ նաև այս հատվածը։ Սյունազարդ դահլիճի հատակի մակարդակից մոտ 0,7 մ բարձր բացվել է պնդացրած ամուր կավից մի նոր հատակ։ Այն ընդհանրապես իր բաղադրությամբ տարբերվում է դահլիճի և պալատի մյուս սենյակների հատակներից։ Կենտրոնական մասում բացվեց տուֆե երեք մեծ քարերից պատրաստված մի քառակուսի հարթակ (1,5×1,5×0,3 մ), որը ծածկված էր մոխրի շերտով, իսկ քարերի արտաքին մակերեսները կրակից ճաքճքված էին։ Հարթակի կողքին դրված էր մոխրով լի մի մեծ

---

7 Նույն տեղում, էջ 70, աղ. 24։

8 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊբ, 1885, էջ 185, «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 55։

9 Հ. Մ. Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., («Հայաստանի հնագիտական հուշարձաններ», պրակ 7, Երևան, 1974, աղ. 3)։

10 Арам Калантарян, Новые материалы о дворцах средневековой Армении, («II международный симпозиум по армянскому искусству», Ереван, 1978, с. 6—7).

կարաս։ Կենտրոնում առկա է քառակուսի գոդավորություն (աղ. I, 2)։ Բացվել է մի խարիսխ, որն իր ձևով տարբերվում է սյունազարդ դահլիճի խարիսխներից։ Խարսխից հարավ՝ որոշակի հեռավորության վրա, դրված են երեք սալեր։ Պետք է ենթադրել, որ շինությունը եղել է սյունազարդ, սակայն մյուս խարիսխները տեղահանված են, իսկ մի մասը գուցե կրացվի, քանի որ հատվածի պեղումները դեռևս շարունակվում են։ Նյութերի և ճարտարապետական մանրամասների քննությունը ցույց է տալիս, որ բացվող շինությունը Լղել է դրադաշտական մեհյան, իսկ հարթակը՝ ատրուշան։ Կենտրոնի քառակուսի գոդավորությունը հուշում է, որ այստեղ կանգնեցվել է քառակող սյուն, որի վրա հատուկ անոթի մեջ վառվել է կրակը։ Այսպիսով, ատրուշանն ունեցել է այն հիմնական բաղադրամասերը, որոնք հատուկ են եղել սասանյան նմանատիպ կառուցվածքներին՝ ստորին հարթակ, սյուն և կրակարան։ Սասանյան դրամների հակառակ երեսներին պատկերված ատրուշաններն իրենց կառուցվածքով լինելով նույնը, տարբեր դարաշրջաններում որոշակիորեն տարբերվում են միմյանցից։ Այս հանգամանքը նկատել է Կ. Տրեվերը, դրամների վերաբերյալ իր հոդվածներից մեկում[11]։ Դվինում բացված ատրուշանը շատ ընդհանուր գծերով է մոտենում դրամների վրա պատկերված ատրուշանների ձևերին։ Դա կարող էր բխել նրանից, որ դրամների փոքր մակերեսները հնարավորություն չեն ընձեռել պահպանել մասշտաբները, և առկա է որոշակի անհամամասնություն։ Ցավոք, մեր տրամադրության տակ առայժմ չկան ուշ սասանյան կրակի տաճարների հատակագծեր և բացված ատրուշանների ձևեր, որպեսզի կարողանանք գտնել ընդհանուր աղերսներ։ Ըստ երևույթին, Դվինի մեհյանն իր հատակագծային ձևերով տարբերվում է սասանյան դասական տաճարներից։ Պետք է ասել, որ այստեղ հատուկ չի կառուցվել կրակապաշտական տաճար, այլ պալատի հարկաբաժիններից մեկը հարմարեցրել են այդ նպատակին։ Հետագա պեղումները երևան կբերեն որոշ հատկանշական կողմեր, որոնք հատուկ են պաշտամունքային նման շինություններին։ Դվինում կրակապաշտական մեհյան կառուցելու մասին հիշատակությունները ժամանակագրական տեսակետից երկու խմբի են բաժանվում։ Հ. Դրասխանակերտցին և Թ. Արծրունին[12] մեզ անհայտ աղբյուրից վկայություններ են բերում V դ. կառուցված մեհյանների մասին։ Սակայն այդ երկու վկայություններն էլ տառապում են անախրոնիզմով, գործող անձերի հակասական ներկայացուցչությամբ և մտածելու տեղիք են տալիս։ Աղբյուրների մյուս խումբը[13] փաստարկում է պարսից Սուրեն մարզպանի օրոք (564—572) Դվինում մեհյան կառուցելը և ավելի հավաստի է։ Պալատի շերտագրական քննությունը և աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ պալատը կառուցվել է V դ. 70-ական թվականներին, անմիջապես կաթողիկոսական կենտրոնը Դվին տեղափոխելուց հետո և, հավանաբար, եղել է կաթողիկոսարանի նախնական շինությունը։ VI դ. պալատական մի հարկաբաժնի վերածումը մեհյանի, որ ապացուցվում է նաև շերտագրական տվյալներով, ենթադրել է տալիս պալատը պարսից բարձր պաշտոնյայի նստոց դարձնելու մասին։ Դա կարող էր տեղի ունենալ միայն Սուրեն մարզպանի կրոնական և քաղաքական անհանդուրժողական քաղաքականության ժամանակ։ Ինչպես նշվեց, պալատը (և նրա հետ միասին մեհյանը) հրդեհվել և ավերվել են 572 թ. ապստամբության ժամանակ։ Եվ պատահական չէ, որ երբ VII դ. սկզբում սկսվեց վերակառուցվել ս. Գրիգոր եկեղեցին, նոր կաթողիկոսարանը հիմնադրվեց եկեղեցուց հյուսիս, իսկ պղծված շինությունը հարթեցվեց և դարձավ եկեղեցուն մերձակա հրապարակ՝ մինչև IX դ. սկիզբը։

Կենտրոնական թաղամասում պեղումները շարունակվել են Կաթողիկե եկեղեցու հարավարևելյան մասում։ Այստեղ շարունակվում է բացվել կարասային թաղումներով հելլենիստական շերտը։ Վերին հորիզոններում պեղվել է ջրմուղ լավ պահպանված մի հատված (VII դ.), գտնվել են վաղ միջնադարյան ապակու և հասարակ խեցեղենի բեկորներ։ Բացվում է անտաշ քարերով պատրաստված մի սալահա-

---

[11] К. В. Тревер, Художественное значение сасанндских монет («Труды отдела Востока Эрмитажа», I, Ленинград, 1938, с. 274).

[12] «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 59, Կիրակոս Գանձակեցի Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 8։ «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1977, էջ 136—138։

[13] «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ Պատրիարքի Յերուսաղեմի», 1871, էջ 260, 264, «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 67։

տակ։ Այս հատվածի պեղումները թույլ են տալիս հետաքրքիր եզրակացություններ կատարել հնավայրի շերտագրության և նյութերի թվագրության մեջ։ Այսպես, միջին հորիզոնում գտնվել են թեավոր խաչերի քանդակազարդ բեկորներ (աղ. II, 2)։ Մեզ թվում է, որ այդ խաչերը եկեղեցու շրջակայքում կանգնեցվել են մինչև VI դ. 70-ական թվականների դեպքերը, իսկ VII դ. դրանք չեն կանգնեցվել։ Ջրմուղի որոշ հատվածներ անցկացվել են VII դ. 20-ական թվականներին՝ կաթողիկե եկեղեցու վերակառուցումից անմիջապես հետո։ Շերտագրական այս պատկերը դիտվում էր նաև նախորդ պեղումների ժամանակ։ Պեղավայրում շատ հատակ նկատվում են երկու հատակները, որոնցից ստորինը VI դարի է (թեավոր խաչ, ապակիներ), իսկ վերջինը՝ VII դարի (կղմինդրներ, շրատարուղի, խեցեղեն, ապակի և այլն)։

Այսպիսով, Դվինի 1980 թ. պեղումների ժամանակ գտնված նյութերը մեծ արժեք են ներկայացնում միջնադարյան Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի, քաղաքաշինության և արհեստագործության հետ կապված բազմաթիվ հարցերի լուսաբանման համար։

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ